ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 սեպտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

124
(2604)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 83

2008 թվականի մարտի 1-ի դեպքերի բացահայտման անհրաժեշտության մասին Նիկոլ Փաշինյանը խոսել է վարչապետ դառնալու հենց առաջին օրվանից եւ տարբեր առիթներով: Իր վարչապետության 100-ամյակի առիթով հրավիրված հանրահավաքի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր. «Բացառում եմ, որ որեւէ մեկը կխուսափի մարտի 1-ի 10 քաղաքացիներին սպանելու եւ ՀՀ-ում պետական հեղաշրջում իրականացնելու պատասխանատվությունից: Չի կարող լինել այդպիսի բան, եւ խնդրում եմ հաստատեք, որ թույլ չեք տա, որ որեւէ ոճրագործ, Հայաստանի քաղաքացու արյունը հեղած որեւէ մարդասպան խուսափի պատասխանատվությունից: Նստելու եք, բոլոր մարդասպաններով նստելու եք, եւ սա լիազորված եմ հայտարարել Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անունից»: Ապա նա մի քանի անգամ տարբեր առիթներով հայտարարել է, թե «Մարտի 1»-ի գործն ամբողջությամբ բացահայտված է: Նույն 100-օրվան նվիրված հանրահավաքի ժամանակ՝ օգոստոսի 17-ին, նա հայտարարեց. «Լսել եմ Հատուկ քննչական ծառայության պետ Սասուն Խաչատրյանի հայտարարությունները, որոնք հնչել են նրա հարցազրույցներում: Հայտնի դարձած տեղեկատվության իմ մեկնաբանությունը հետեւյալն է. «Մարտի 1»-ի գործը, ըստ էության բացահայտված է», - հայտարարել էր նա: Տարիներ անց նա սկսեց իր համար սկզբունքային հարցից կամաց-կամաց հետ կանգնել եւ մանեւրել: 2021 թվականի մարտի 1-ին նա հայտարարեց. «Ճիշտ է՝ մարտի 1-ին կրակողները բացահայտված չեն, բայց սպանությունները, այն ֆոնը, որում տեղի է ունեցել դա, բացահայտված է»: Ի՞նչ է նշանակում՝ ֆոնը բացահայտված է: Սա դեռ վերջը չէ. արդեն ապրիլի 14-ին նա հայտարարեց. «Ես չգիտեմ, թե այդ քրեական գործի հատորները ինչ կարգավիճակ ունեն հիմա, բայց բացահայտում ասելով՝ մենք նկատի ունենք ճշմարտության բացահայտումը: Ի վերջո, այդ նյութերը կան, նյութերը չեն այրվելու, ես ենթադրում եմ, որ դրանք մի իքս պահի ունենալու են այնպիսի կարգավիճակ, որ կարող է ուղղակի հրապարակվել, եւ դուք կտեսնեք՝ «Մարտի 1»-ի գործը ամենայն մանրամասնությամբ բացահայտված է»: Թե ինչն է Փաշինյանը բացահայտում համարում, անհասկանալի է, բայց փաստ է, որ այս պահի դրությամբ 10 զոհերին սպանելու համար ոչ ոք ճաղերի հետեւում չէ, «Մարտի 1»-ի գործն էլ բացահայտված չէ: Ստացվում է՝ Փաշինյանը հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Հայաստանում օր օրի գրանցվող գնաճին զուգահեռ՝ շահումով օնլայն խաղերով զբաղվող կազմակերպությունների սեփականատերերը շարունակում են երկրաչափական պրոգրեսիայով գերշահույթներ ստանալ: Քաղաքացիներին մոլորություն մեջ գցող, կախում առաջացնող օնլայն խաղերի պատճառով բազմաթիվ ընտանիքներ են փաստի առաջ կանգնել. դեպքեր են եղել, երբ անհատները ինքնավնասման, ընդհուպ՝ ինքնասպանության փորձ են արել՝ էլ չասած ունեզրկությունների, տունուտեղ կորցնելու ու նմանատիպ այլ դեպքերի մասին: «Վբեթ» ընկերությունը, որ իր նկարագրության մեջ պնդում է, թե «Հայաստանում առաջատար բուքմեյքերական ընկերությունն առցանց խաղային արտադրանքի լայն ընտրանի է ներկայացնում», պարզվում է, հրաժարվել է տրամադրել որոշ քաղաքացիների շահումները: Նման եզրահանգման ենք գալիս՝ ուսումնասիրելով դատական ակտերի որոնման DataLex համակարգը: Ըստ այդ համակարգի՝ օրինակ՝ 2020 թվականի ընթացքում քաղաքացիներ Մարիամ Ղազարյանը, Քնարիկ Երանոսյանը գումարի բռնագանձման պահանջով ընկերությանը դատի են տվել: Նույն պահանջով 2019-ին ընկերության դեմ դատական հայց են ներկայացրել քաղաքացիներ Թորոս Սեմիզյանը, Խաչատուր Ավետիսյանը, Կարեն Խաչատրյանը, Շմավոն Շահումյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, օրինակ, Շմավոն Շահումյանը պահանջել է իրեն տրամադրել շահած 1.572.550 հազար դրամը, դատարանը, սակայն, որոշել է հայցը բավարարել մասնակի ու ընկերությանը պարտավորեցնել քաղաքացուն վճարել 560 հազար դրամ: Քաղաղաքացի Խաչատուր Ավետիսյանի՝ 400.000 դրամի պահանջով հայցն էլ դատարանն ամբողջովին է բավարարել, ու «Վբեթ» ընկերությունը ստիպված է եղել վճարել ոչ միայն պահանջվելիք գումարը, այլ նաեւ հայցվոր կողմի դատական ծախսերի գումարը: Սա նշանակում է, որ քաղաքացիները, տրվելով սադրանքին, ամեն դեպքում, գումար են խաղացել, շահել են, սակայն «Վբեթ» ընկերությունը հրաժարվել է դրանք վճարել, ինչն էլ դատական վեճի պատճառ է դարձել: Ի՞նչ է ստացվում. ՀՀ հպարտ քաղաքացիների վարչապետ Նիկոլ Փաշինյանի իշխանության հիմնական ֆինանսավորողները՝ Վահե, Վիգեն Բադալյանները, որ ՀՀ-ում հայտնի բուքմեյքերական «Վիվառո Բեթինգ» ՍՊԸ-ի սեփականատերերն են, արդար չեն վարվում իրենց սպառողների հետ:

vbet



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգը 44-օրյա պատերազմի գործողությունների մասով հարուցված քրեական գործերով կանգնել է մի խնդրի առաջ: Բանն այն է, որ 2020 թ. 44-օրյա պատերազմի գործերը քննող նախաքննական մարմիններին պատերազմի ոչ բոլոր նյութերն են հասու, քանի որ դրանք համարվում են պետական, ռազմական գաղտնիք: Ավելին՝ մեզ հասած լուրերի համաձայն՝ նախաքննական մարմիններից մեկը դիմում է ներկայացրել ՀՀ կառավարություն՝ խնդրելով տրամադրել պատերազմի մասով որոշ նյութեր, իսկ թե ինչ են պատասխանել դիմումին, մեզ առայժմ մանրամասներ պարզել չհաջողվեց, միայն գիտենք, որ այնքան էլ գոհացուցիչ չի եղել պատասխանը: Նկատենք, որ, այս իրավիճակին զուգահեռ, Քննչական կոմիտեն բավականին ակտիվ կերպով մեկը մյուսի հետեւից մեղադրանք է առաջադրում Արցախի ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանին Շուշիի ինքնապաշտպանությունը ճիշտ չկազմակերպելու համար եւ, դատարանի որոշմամբ, կալանքի է տանում: Իսկ, ահա, երեկ մեղադրանք առաջադրվեց Հայաստանի պաշտպանության նախարարության ռազմական վերահսկողական ծառայության պետ, Արցախի ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանին: Թե ինչն է ակտիվության պատճառը, դեռ անհասկանալի է. երկու տարի անց հիշել են պատերազմի մեղավորներին:

«Աղբահանության ու սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ են կատարվելու: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ անգամ մեծ տուգանքներ են նշանակվելու: Մասնավորապես, գործող աղբավայրերի բարեկարգմանն ու շահագործմանը ներկայացվող նվազագույն պահանջները չկատարելու դեպքում աղբավայրը շահագործող ընկերությունը կտուգանվի 100 հազար դրամից 200 հազար դրամի չափով: Պայթուցիկ եւ դյուրավառ նյութերի, բժշկական հաստատությունների, սպանդանոցների ու այլ տեսակի կենսաբանական աղբի դեպքում, ինչպես նաեւ այն պարագայում, երբ հեղուկ գազն առանց հատուկ տարաների մեջ պահեստավորելու աղբավայր կնետվի, ֆիզիկական անձը՝ 10.000-20.000, իրավաբանական անձը 80.000-100.000 դրամի չափով կտուգանվի: Նշենք, որ համայնքի կամ աղբահանության օպերատորի տրամադրած կոշտ կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններում կամ կոնտեյներներում բժշկական թափոններ, մարտկոցներ ու կուտակիչներ, ինչպես նաեւ 1 խմ եւ ավելի ծավալով այրվող, շիկացած կամ տաք աղբ, ձյուն ու սառույց թափելու դեպքում ֆիզիկական անձինք 5000-10.000 դրամով կտուգանվեն, իրավաբական անձինք՝ 20.000-30.000 հազար դրամով: Նույն չափով տուգանք կարող է կիրառվել նաեւ ֆիզիկական ու իրավաբանական այն անձանց նկատմամբ, որոնց՝ աղբանոցներում թափած աղբը կարող է վնաս հասցնել աղբահանության աշխատանքներ իրականացնող անձանց կյանքին եւ առողջությանը:

ԿՈՏՐՎԱԾ ՈՂՆԱՇԱՐՈՎ

25 ՏԱՐՎԱ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Երեկ՝ սեպտեմբերի 2-ին, համայն հայությունը նշում էր Արցախի Հանրապետության օրը: 44-օրյա պատերազմից հետո «նշել» բառը, մեղմ ասած, ճոխ է հնչում, բայց իրականությունն այն է, որ 31 տարի առաջ՝ այդ օրը հենց հռչակվեց հայկական երկրորդ հանրապետությունը: Արցախի Հանրապետությունը ո՛չ նախապատերազմական փառքը, ո՛չ տարածքներն ունի այսօրվա դրությամբ: Ցավ ի սիրտ, արյան գնով գծված հայկական պետականության սահմաններն օր օրի կտրտվում են, գյուղերն ու շեները՝ անցնում հակառակորդին: Եվ այդ ամենը՝ ոչ միայն համայն աշխարհի լուռ ու ոչինչ չասող, այլ հենց մեր՝ հայերիս հարմարվողական ու ատամ ցույց չտվող հայացքի ներքո: Արցախի Ազգային ժողովի նախկին պատգամավոր Արզիկ Մխիթարյանն իր հարցազրույցներում մեկ անգամ չէ, որ շեշտել է՝ Արցախը Հայաստանի անվտանգության դարպասն է, եւ պահպանելով Արցախի սահմանները՝ պահպանում ենք Հայաստանը: Այսօր, սակայն, Արցախն իր անկախությունը տոնում է կոտրված ողնաշարով, ինչը, սակայն, հնարավոր է ուղղել: «Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն Արցախի ԱԺ նախկին պատգամավոր Արզիկ Մխիթարյանն է:

-Երեկ Արցախի Հանրապետության 31-րդ տարեդարձն էր, եւ արդեն 2-րդ անգամն է, որ Արցախն իր տարեդարձը վիրավոր, բզկտված ու տարածքները հանձնված վիճակում է նշում: Ինչպիսի՞ն են Ձեր զգացողությունները:

-Ոչ միայն ես, այլ նաեւ հավանաբար ամբողջ հայությունը հաստատ նորմալ զգացողություններ չունի, որովհետեւ մենք իսկապես ավելի քան 25 տարի վայելեցինք անկախության հպարտությունն ու ամբողջ աշխարհում զգում էինք, որ արժեք ունենք, ու, ամենակարեւորը, զգում էինք՝ մեր ողնաշարն ուղիղ է: Կարծում եմ՝ ոչ միայն Արցախում կամ Հայաստանում, այլ նաեւ օտար երկրներում ապրող հայությունը իսկապես մտահոգ է, որ Արցախում այսպիսի ավարտ եղավ, չնայած դեռ լիահույս եմ ու չեմ կարծում, որ սա վերջնագիծ է, քանի որ արցախցիները դժվարանում են համակերպվել այս մտքին: Մյուս կողմից՝ պետք է ընդունենք՝ ունենք այն, ինչ ունենք: Մենք բոլորս վատ զգացողությունների մեջ ենք, ու անհնարին է հաշտվել այն մտքին, որ թեժ, պատերազմական օրինաչափություններին հակասող, ռազմարվեստի կանոններից բավական հեռու սցենարով տանուլ տվեցինք եւ կորցնում ենք մեր անկախությունն ու ինքնորոշման իրավունքը, որը մենք բավական թանկ գնով էինք ձեռք բերել:

-Արցախահայության ինքնորոշման իրավունքի մասին խոսք անգամ չկա, ու դրա ապացույցը նաեւ Փաշինյան-Ալիեւ Բրյուսելում Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի նախաձեռնությամբ տեղի ունեցած բանակցություններն ու դրանից հետո տարածված հաղորդագրություններն էին: Դուք այս պահին ու, առհասարակ, ինչպե՞ս եք տեսնում Արցախի ճակատագիրը:

-Դժվար հարց եք տալիս, քանի որ քաղաքական նման եզրահանգումներ կարող են պետական այրերն անել: Նրանք են կանգնած պետության գլխին, իշխանավորները նրանք են ու նրանք էլ պարտավոր են վճռել, թե ինչ է սպասում, ու ինչ կլինի: Իբրեւ Արցախի անկախության ու ճակատագրի համար մտահոգ մտավորական, արցախցի՝ կարծում եմ, որ այդ հարցը պետք է ընդհանուրի մեջ դիտարկել, հարցի պատասխանն էլ՝ հայության միասնականության մեջ փնտրել: Եթե այդ հարցը Դուք տարբեր մարդկանց առանձին-առանձին հարցնեք, ապա նրանք կդժվարանան պատասխանել, թե ինչպես են պատկերացնում Արցախի վաղվա օրը: Գիտեք, հայ մեծանուն արձակագիր Հրանտ Մաթեւոսյանի շատ հանրահայտ միտքը հիշեցի այս պահին, երբ ասում է, որ յուրաքանչյուր առանձին թռչուն չի կարող չվել Եգիպտոս, որովհետեւ Եգիպտոսի տեղը չգիտի: Եգիպտոսի տեղը գիտի միայն երամը: Երամը մի մարմին է, որն ունի Եգիպտոսը գտնելու բնազդը: Այդ բնազդը միայն երամինն է: Սա տիպիկ օրինակ է մեր ժողովրդի համար, եւ, այո, առանձին-առանձին անհատները դժվար կարողանան Ձեզ ասել, թե որն է ելքը: Մեր միասնական բնազդով, կարծում եմ, հայ ժողովրդի երամն իր ճանապարհը կգտնի, եւ մենք կգնանք դեպի լուսավոր ապագա:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԻԾ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՆՈՒՄ Է ԿԱԶՄԱՔԱՆԴՄԱՆ

Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանն այն համոզմանն է, որ Պաշտպանության նախարարության շրջանառած նոր նախագիծը, որով առաջարկվում է 24 մլն դրամ փոխանցել պետբյուջե ու ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից, ոչ միայն ընդհանուր անվտանգային համակարգին եւ Զինված ուժերում առկա տրամաբանությանն է մեծ հարված հասցնում, այլ նաեւ չի լուծում այն խնդիրները, որոնք դրված են սույն նախագծի հիմնավորման հիմքում:

Նրա համոզմամբ՝ այս ծրագիրը սոցիալական անարդարության բավականին մեծ խնդիրներ է ստեղծելու, ինչն անգամ կարող է ներհասարակական հարաբերությունների ճգնաժամի հասցնել, քանի որ ստացվելու է այնպես, որ հնարավորություն ունեցող մարդիկ (երկրի բնակչության 15-20 %-ը) կարողանալու են իրենց որդիներին ազատել ծառայությունից, իսկ մոտավորապես 70-75%-ը այդ հնարավորությունը չեն ունենալու:

«Այսինքն՝ անհավասար պայմաններ են ստեղծվում ՀՀ քաղաքացիների համար, եւ սա նաեւ այն դեպքում, երբ հայրենիքի պաշտպանության հարցը նույնիսկ սահմանադրական ամրագրում ունի: Երկրորդը՝ սա գաղափարական մտածողության առումով բավականին ծանր հարված է լինելու, որովհետեւ սերունդների համար հիմնական ռազմահայրենասիրական դաստիարակչական հիմքում հայրենիքի պաշտպանության հարցն է, եւ այս պարագայում, երբ քաղաքացիները հնարավորություն ունեն գումարով ազատվելու կամ կարճեցնելու իրենց ծառայության ժամկետը, բնականաբար սա բավականին մեծ հարված է»,- հավելում է նա:

Ինչ վերաբերում է 24 միլիոնը հետագայում պայմանագրային զինծառայությանն ուղղելուն, ապա, ըստ Աբրահամյանի, նման ձեւակերպումը նույնիսկ վիրավորական է. մշտապես կարելի է աղբյուրներ գտնել, որոնցով հնարավոր կլինի որոշակի հաճախականությամբ բարելավել զինծառայողների սոցիալ-կենցաղային պայմանները, այդ թվում՝ աշխատավարձերը:

«Այնպես չէ, որ Հայաստանում բոլորը ձգտում են զինվորական ծառայության, եւ ասել, որ սրանով մենք կրկնապատկելու կամ եռապատկելու ենք պայմանագրային զինծառայողների թիվը, չի կարող միանշանակ լինել: Պետք է հասկանալ՝ արդյոք մարդիկ նույնիսկ որոշակի բարձր աշխատավարձի պարագայում պատրաստ են գնալ եւ ծառայել, քանզի բոլոր այն խնդիրները, որոնք այսօր ստեղծված են, մարդկանց դրդում են խուսափել ծառայությունից: Դրանց հիմքը վաղվա օրվա նկատմամբ անորոշությունն է, մշուշոտ իրականությունը, ապագայի բացակայությունը, որոնք էլ խնդիրներ են առաջացնում ե՛ւ պարտադիր ժամկետային զինծառայության ե՛ւ նաեւ այս պարագայում պայմանագրային զինվորական ծառայության համար, այդ թվում՝ նաեւ սպայական:

Այն իրավիճակում, երբ զինծառայողի թիկունքին չկա պետություն, իսկ իշխանությունը իր քաղաքականությամբ կազմաքանդման է տանում Զինված ուժերը, ապա այդ պարագայում նույնիսկ նպաստավոր թվացող նախաձեռնությունները չեն կարող որեւէ խնդիր լուծել»,- ամփոփում է նա:

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՇՈԳ Է

Հայաստանում ուսումնական տարին արդեն երկու օր է, ինչ մեկնարկել է, սակայն Էջմիածին քաղաքի որոշ դպրոցներում երեկ աշակերտները սահմանված ժամանակից քիչ են մնացել դպրոցում: Պատճառը շոգն է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ սեպտեմբերի 1-ին Էջմիածնի որոշ դպրոցներում ուսուցիչները սաների ծնողներին զգուշացրել են, որ շոգի պատճառով աշակերտներին, հնարավոր է, շուտ տուն ուղարկեն: Բանն այն է, որ դասասենյակները շոգ օրերին չեն զովացվում, այդ իսկ պատճառով երեխաները չեն կարողանում դասերին մասնակցել:

Ի դեպ, բարձր ջերմաստիճանի մասին խոսում է նաեւ Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնը՝ տեղեկացնելով, որ Իրաքի շրջաններից արեւադարձային տաք օդային հոսանքների ներթափանցմամբ պայմանավորված՝ Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռնային գոտիներում եւ Երեւանում սեպտեմբերի 2-4-ի ցերեկային ժամերին օդի ջերմաստիճանը կհասնի +38…+40 աստիճանի:

ԳՈՐԾԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է

Ինչպես հայտնել էինք, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանի, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանի՝ Պատրոն Դավոյի եւ մյուսների վերաբերյալ քրեական գործը տեղափոխվել է Հակակոռուպցիոն դատարան: Հայտնի է, թե որ դատավորն է քննելու ՊՆ նախկին պաշտոնատար անձանց դեմ հարուցված քրեական գործը. այն քննելու է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր, նախկին դատախազ Վահե Դոլմազյանը: Ի դեպ, նա ԱԺ նախկին պատգամավոր, գեներալ- լեյտենանտ Մանվել Գրիգորյանի դեմ քրեական գործով մեղադրող դատախազն է եղել:

Նշենք, որ Ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործը, ըստ այս կառույցի տարածած հաղորդագրության, վերաբերում է Զինված ուժերի կարիքների համար ռազմամթերքի մատակարարման գործընթացում ենթադրյալ չարաշահումներ եւ առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ կատարելու դեպքերին, մասնավորապես՝ ՊՆ-ի կողմից անպիտան հրթիռներ գնելուն:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ երեկ ուշագրավ դեպք է եղել Կենտրոն վարչական շրջանում: Ըստ Ar2Lur.a2-ի հասած բացառիկ տեղեկությունների՝ 44 տարեկան տղամարդը, տանը գազը բաց թողնելով, փորձել է ինքնասպան լինել, սակայն հարեւանները զգացել են շենքում գազի հոտը եւ ահազանգել են իրավապահ համակարգին, հետո չեզոքացրել են վտանգը ու տղամարդուն տեղափոխել են հիվանդանոց:

Տղամարդը իրավապահներին հայտնել է, որ այդ քայլին գնացել է, քանի որ հոգնած է եղել կյանքից:

ԿԱԽՎԵԼ Է ՀԱԿԻ ԹԵԼՈՎ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վարդենուտ գյուղում ինքնասպանության դեպք է տեղի ունեցել: Մոտ 60 տարեկան տղամարդը ինքնասպանություն է գործել իրենց տան հետնամասի երկաթյա աստիճաններից հակի թելով կախվելու միջոցով:

Հարեւաններն են ահազանգել ոստիկանություն ու պատմել դեպքի մասին: Թե ինչը կարող էր նման քայլի պատճառ դառնալ, դեռեւս հայտնի չէ:

ԷԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆԵՐ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը 2022 թ. սեպտեմբերի 1-ից բարձրացրել է ակադեմիական կազմի աշխատավարձերը: Պրոֆեսորների աշխատավարձը 1 դրույքով ծանրաբեռնվածության դեպքում այսուհետ կկազմի 530.000 ՀՀ դրամ (բարձրացումը՝ 24%), դոցենտներինը՝ 420.000 ՀՀ դրամ (բարձրացումը՝14%), իսկ ավագ դասախոսներինը եւ դասախոսներինը՝ համապատասխանաբար 380.000 եւ 350.000 ՀՀ դրամ:

Նշվում է, որ պրոֆեսորների եւ դոցենտների աշխատավարձի էական բարձրացումը թույլ կտա մի կողմից ներգրավել լավագույն կադրերին, մյուս կողմից՝ երիտասարդ սերնդի համար կստեղծի գիտությամբ եւ հետազոտությամբ զբաղվելու էական խթաններ: Նույն նպատակի իրացման համար Տնտեսագիտականն իր դասախոսներին հնարավորություն է ընձեռում ամսական մինչեւ 250.000 ՀՀ դրամի չափով հավելյալ վարձատրություն ունենալու ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թիմերում ներգրավվելու եւ ՀՀ պետական կառավարման տարբեր մարմինների կարիքների բավարարման նպատակով հետազոտություններ իրականացնելու դեպքում:

Հարկ է նշել, որ Տնտեսագիտականը բարձրացրել է նաեւ վարչական աշխատողների աշխատավարձը միջինում 5%-ով:

ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՐՑ

Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ԵՎ ՈՒ՞Մ ԿՈՂՄԻՑ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հայտարարություն է տարածել, որտեղ ասվում է.

«Ն. Փաշինյանի իշխանությունն ասում է՝ մենք մեղավոր չենք, բանակցությունները վարել են Արցախի իշխանությունները, որոնք էլ կազմակերպել են հայկական բնակավայրերի հանձնման գործընթացը.

Հազարավոր հայորդիների անդրդվելիության, խիզախության, աննկուն կամքի, կյանքի եւ առողջության գնով ազատագրված Բերձորը, Աղավնոն եւ Ներքին Սուսը Ն. Փաշինյանի համաձայնությամբ հանձնվեցին Ադրբեջանին: Օրերս էլ Ադրբեջանին հանձնվեց Բերձորի միջանցքը, որը յուրահատուկ հույսի կամուրջ էր դարձել, կարեւոր գործոն Արցախում անվտանգ եւ խաղաղ կյանք վարելու համար: Եվ Ն. Փաշինյանը պարտավոր է հստակ պարզաբանումներ ներկայացնել համայն հայությանը՝ այս ամոթալի համաձայնության կապակցությամբ:

Դեռ օգոստոսի 11-ին գրությամբ դիմել էի Ն. Փաշինյանին՝ պահանջելով պարզաբանումներ, թե՝

1. Բերձոր, Աղավնո եւ Ներքին Սուս համայնքների հանձնումը իրավական ուժ ունեցող ի՞նչ փաստաթղթերի հիման վրա է իրականացվում,

2. արդյոք օգոստոսի 25-ը նշված համայնքների հանձնման վերջնակա՞ն համաձայնեցված օր է, թե՞ ժամկետի երկարաձգման հնարավորություն կա,

3. ի՞նչ փաստաթղթով եւ ու՞մ կողմից է համաձայնեցվել նշված համայնքների հանձնման հարցը,

4. ՀՀ կառավարությունը 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո նշված համայնքների հանձնման հարցի վերաբերյալ ի՞նչ բանակցություններ է վարել, այդ ընթացքում արդյոք բանակցե՞լ է նշված համայնքները չհանձնելու շուրջ: Եթե այո, ե՞րբ, ո՞վ եւ ու՞մ հետ է բանակցել, ի՞նչ արդյունքներ են արձանագրվել,

5. եթե ՀՀ կառավարությունը նշված համայնքների չհանձնման նպատակով բանակցություններ է վարել եւ մերժվել, ի՞նչ հիմնավորումներ են ներկայացվել մերժող կողմից: Իսկ եթե ՀՀ կառավարությունը նշված համայնքների չհանձնման նպատակով բանակցություններ չի վարել, որո՞նք են պատճառները եւ հիմնավորումները,

6. եթե վաղուց հայտնի էր, որ այդ բնակավայրերը պիտի հանձնվեն, ինչու՞ ժամանակին նախապատրաստական աշխատանքներ չեն իրականացվել, այլ, ընդհակառակը, տարբեր միջոցներով ներդրումներ են արվել այդ համայնքներում, իսկ այսօր ԱՀ պատգամավորները ահազանգում են, որ տարհանման ռեսուրսները չեն բավարարում,

7. արդյոք բանակցե՞լ, ձե՞ռք եք բերել պայմանավորվածություն, որ նշված համայնքների պատմամշակութային ժառանգությանը, գերեզմաններին վնաս չի հասցվի: Ստացե՞լ եք համապատասխան երաշխիքներ: Եթե այո, ումի՞ց եւ ի՞նչ երաշխիքներ եք ստացել. եթե ոչ, ինչու՞:

Նիկոլ Փաշինյանի փոխարեն մեզ համար ճակատագրական այս հարցերին պատասխանել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը.

«Ի պատասխան վարչապետի աշխատակազմին ուղղված Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ նշյալ բնակավայրերից հայկական բնակչության տարհանումը պայմանավորված է Լաչինի միջանցքի երթուղու փոփոխության հետ՝ ի կատարումն 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ կետի 2-րդ պարբերության:

Հայտնում ենք նաեւ, որ խնդրո առարկայի վերաբերյալ իրավական նշանակություն ունեցող առկա բոլոր փաստաթղթերը հրապարակված են, իսկ գործընթացների կազմակերպման հետ կապված բանակցությունները վարվել են Արցախի իշխանությունների կողմից»:

Ոչ մի էական պատասխան՝ իմ կողմից բարձրացված կոնկրետ հարցերին: Ի՞նչ է ստացվում. Ն. Փաշինյանի իշխանությունն ասում է՝ մենք մեղավոր չենք, բանակցությունները վարել են Արցախի իշխանությունները, հայկական բնակավայրերի հանձնման գործընթացն էլ կազմակերպել են Արցախի իշխանությունները: Ու սա՝ այն պայմաններում, երբ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում հստակ գրված է. «Հայաստանի Հանրապետությունը Արցախի անվտանգության երաշխավորն է»:

Փաստորեն, տարածքներ հանձնելով է Նիկոլ Փաշինյանը երաշխավորում Արցախի անվտանգությունը, մինչդեռ 2019թ. օգոստոսի 5-ին Ստեփանակերտի Վերածնունդ հրապարակում հայտարարում էր, թե Արցախը Հայաստան է եւ վերջ:

Հ. Գ. Նիկոլ Փաշինյանը, որ Հայաստանում ժողովրդավարությունը հռչակել է թիվ մեկ բրենդ, Հայաստանի եւ Արցախի քաղաքացիների իրավունքներին, անվտանգությանը եւ մեր երկրի տարածքային ամբողջականությանը վերաբերող կարեւորագույն հարցերին խուսափում է պատասխանել՝ դրանք ուղղորդելով դեպի ԱԳՆ տիրույթ: Խորհրդարանական երկրում Կառավարության ղեկավարը խուսափում է հաշվետվողականությունից:

Ի դեպ, այսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման օրն է, որը երբեք չի ջնջվելու մեր օրացույցի հերոսական օրերի շարքից, ինչքան էլ օրվա իշխանությունը ցանկանա:

Շնորհավորում եմ»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔՆՆԱՐԿԵԼ Է ԸՆԹԱՑՔԸ

Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարները քննարկել են եռակողմ պայմանավորվածությունների կատարման ընթացքը:

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության մամուլի ծառայության հաղորդմամբ՝ ս.թ. սեպտեմբերի 1-ին հայկական կողմի նախաձեռնությամբ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը հեռախոսազրույց էր ունեցել ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ:

Կողմերը հանգամանորեն քննարկել են Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ 2020 թ. նոյեմբերի 9-ին, հունվարի 11-ին եւ 2021 թվականի նոյեմբերի 26-ին կնքված եռակողմ համաձայնագրերի իրականացման ընթացքն ու հեռանկարները:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում շարունակել շփումները:

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սուրեն Մինասյանին ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ նշանակելու որոշում է ստորագրել: Որոշման մեջ ասվում է. «Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Սուրեն Մինասյանին նշանակել քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ»:

ԱՅՑ՝ ԱՄՆ

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը կմեկնի Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Արցախի ԱԳ նախարարի այցը համընկնում է ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի՝ դաշնային քաղաքականության վերաբերյալ սեմինարի հետ, որն անցկացվելու է ԱՄՆ մայրաքաղաքում:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՍՊԱՅԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ զինվորական ղեկավար պաշտոն զբաղեցրած, կոչումով գեներալ-լեյտենանտ Ջ.Հ.-ն, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից սանձազերծած եւ վարած ագրեսիվ պատերազմի ընթացքում հայտարարված ռազմական դրության պայմաններում անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ` չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, որպիսի գործողություններն առաջացրել են ծանր հետեւանքներ. յուրային ստորաբաժանումները կրել են մեծաքանակ մարդկային ուժի եւ զինտեխնիկայի կորուստներ, ռեզերվային ստորաբաժանումները դարձել են անմարտունակ, զբաղեցրած կրակային դիրքերն անցել են հակառակորդի հսկողության տակ:

N զորամասի պաշտպանության առաջնագիծը ճեղքելուց եւ պաշտպանության գոտու խորք մխրճվելուց հետո ստեղծված իրադրությունը կարգավորելու, ճեղքված բնագիծը վերականգնելու, դեպի թիկունք ներթափանցած հակառակորդին շրջափակման մեջ վերցնելու, վերջինիս սնուցման բոլոր ճանապարհները շրջափակելու նպատակով Ջ.Հ-ն 2020թ. հոկտեմբերի 6-ին որոշում է կայացրել հակառակորդին հասցնել բանակային հակահարված:

Ջ.Հ-ն, հանդիսանալով միանձնյա ղեկավար, խաղաղ եւ պատերազմի ժամանակ պատասխանատու լինելով իրեն վստահված զորամասի (ստորաբաժանման) մշտական մարտական ու զորահավաքային պատրաստականության, զորամասի (ստորաբաժանման) մարտական խնդիրների հաջող կատարման համար, պարտավոր լինելով ապահովել հակահարվածի համար մարտական կանոնադրությամբ սահմանված անհրաժեշտ նախապայմանները, 2020թ. հոկտեմբերի 7-ին անփույթ վերաբերմունք է դրսեւորել ծառայության նկատմամբ, այն է՝ պաշտպանության գոտու ողջ երկայնքով հակառակորդին 1:5 հարաբերակցությամբ թե՛ քանակապես, թե՛ որակապես զիջելու, այդ թվում՝ հակառակորդի օդային անգերազանցելի առավելության պայմաններում, լրջորեն չուսումնասիրելով յուրային ստորաբաժանումների մարտունակությունը եւ կարողությունները, կասեցրած չլինելով հակառակորդի առաջխաղացումը, 2020թ. հոկտեմբերի 5-ից, չունենալով օդային հետախուզությամբ հակառակորդի տեղակայումն ու կազմը լրահետախուզելու եւ հակառակորդի հնարավոր ռեզերվները բացահայտելու եւ այդկերպ մոտակա խորքում հակառակորդի ռեզերվային ստորաբաժանումների առկայությունը ժամանակին բացահայտելու հնարավորություն, ձեռնարկել է բանակային հակահարված, որի պլանավորման եւ իրականացման ընթացքում անտեսել է մարտական կանոնադրությամբ սահմանված հարձակողական գործողություններին ներկայացվող՝ հակառակորդին 1:3 հարաբերակցությամբ գերազանցելու պահանջը, չի պահպանել մարտական խնդրի կատարման՝ իր իսկ սահմանած ժամանակացույցը, հակահարված իրականացնող ստորաբաժանումների միջեւ բացակայել է փոխգործակցությունը:

2020 թվականի հոկտեմբերի 8-ին՝ առավոտյան, նշված զրահախումբը մարտական պատրաստականության վիճակի է բերվել առաջադրված խնդրի կատարմանն անցնելու նպատակով, սակայն անձնակազմի ցածր բարոյահոգեբանական վիճակի, զրահատեխնիկաներում ի հայտ եկած տեխնիկական խնդիրների, թվաքանակի քիչ լինելու պատճառով առաջադրված խնդրի մեկնարկը հապաղել է, ապա հակառակորդն ինտենսիվ հրետակոծել է տվյալ շրջանը, որտեղ կենտրոնացած է եղել անձնակազմը եւ զրահատեխնիկան, յուրային ստորաբաժանումները կրել են տեխնիկաների եւ մարդկային ուժի կորուստներ, որպիսի գործողությունների հետեւանքով ձախողվել է մարտական առաջադրանքի կատարումը:

Բացի այդ, ղեկավար պաշտոն զբաղեցրած, կոչումով գեներալ-լեյտենանտ Ջ.Հ-ն, սանձազերծած ագրեսիվ պատերազմի ընթացքում՝ 2020թ. հոկտեմբերի 12-ին, ծառայության նկատմամբ դարձյալ դրսեւորել է անփույթ վերաբերմունք, որպիսի գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ:

2020 թվականի հոկտեմբերի 11-ին N զորամասի հրետանային դիվիզիոնը կրակային դիրք է զբաղեցրել Վարանդայի շրջանի Ջուվառլու կոչվող բնակավայրի մոտակայքում: Հոկտեմբերի 12-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, նշված կրակային դիրքից շուրջ 1 կմ առաջ՝ բլրի վրա տեղակայված դիվիզիոնի հրամանատարական դիտակետից դիտարկվել է 100-ից ավելի զինծառայողներից բաղկացած խմբի տեղաշարժ դեպի կրակային դիրքի ուղղությամբ, որոնց մեջ նկատվել են նաեւ ՀՀ ԶՈՒ համազգեստ կրող անձինք:

Վերջինս, այս անգամ մոտենալով աշխատանքային քարտեզին, օպերատիվ եւ հետախուզության բաժինների սպաների հետ միասին քննարկում է կատարել, որից հետո, առանց հստակեցնելու մոտեցող անձնակազմի պատկանելությունը, քարտեզներում չունենալով որեւէ տեղեկատվություն տվյալ շրջանում համազորային ստորաբաժանումների տեղաշարժի վերաբերյալ, հայտնել է, որ խմբավորումը յուրային է, որը փոխանցվել է դիվիզիոնի անձնակազմին:

2022թ. սեպտեմբերի 2-ին Ջ.Հ-ին երկու դրվագով մեղադրանք է ներկայացվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասին), նույն օրը վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը եւ պաշտոնավարման կասեցումը: Նախաքննությունը շարունակվում է:

ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

ԿԱՆՉԵԼ ԵՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանը հրավիրվել է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն:

«Ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 16-րդ եւ 17-րդ հոդվածներով՝ ծանուցում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Ձեզ պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր:

Դուք իրավունք ունեք սույն ծանուցագիրը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում ներկայանալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն (ք.Երեւան, Տիգրան Մեծ պ. 50)՝ ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 10-ի N 2044-Ն որոշման: Միաժամանակ հայտնում եմ, որ ներկայանալ կարող եք 2022թ. սեպտեմբերի 5-ին՝ ժամը 10:00-ին, իսկ նշված օրը եւ ժամին ներկայանալու անհնարինության դեպքում հարկավոր է օրը եւ ժամը համաձայնեցնելու նպատակով նախապես զանգահարել 010-511-649 հեռախոսահամարին»,- նշված է հայտարարության մեջ:

ԼՈՒՐԵՐ

ԿՐԿՆԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչները կրկնակի ստուգմամբ պարզել են, որ անհատ ձեռնարկատեր Աննա Բեգլարյանին պատկանող հացաբուլկեղենի (խաչապուրու, կարկանդակի եւ հոթ դոգի) արտադրությունում (ք. Երեւան) շտկվել են սանիտարահիգիենիկ նորմերի նախկինում հայտնաբերված բոլոր խախտումները:

ՍԱՏՄ-ից հայտնում են, որ ՍԱՏՄ ղեկավարի որոշմամբ՝ հացաբուլկեղենի արտադրամասի գործունեության կասեցումը վերացվել է:

ԴԻԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Երեւանում սեպտեմբերի 1-ին՝ ժամը 20:10-ի սահմաններում, Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման կենտրոն եւ ոստիկանության Արաբկիրի բաժին ահազանգ է ստացվել, որ Կոմիտասի պողոտայի թիվ 19 շենքի բնակարաններից մեկից տհաճ հոտ է զգացվում, բնակիչներն էլ մի քանի օր է, չեն արձագանքում դռան եւ հեռախոսազանգերին:

Տեղում փականագործների օգնությամբ բացելով դուռը՝ պատշգամբի հատակին եւ լոգասենյակի հատակին հայտնաբերվել են դիեր:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ դիերի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Քննիչի որոշմամբ նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ: Կայքի տեղեկություններով՝ ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածները քույր ու եղբայր են՝ 57-ամյա Աշոտ Վարդանյանն ու 53-ամյա Աշխեն Վարդանյանը:

ՀԱՅՏՆՎԵԼ Է ՁՈՐԱԿՈՒՄ

Գեղարքունիքի մարզում երեկ՝ սեպտեմբերի 2-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզի բնակիչ 23-ամյա Պավլիկ Բ-ն իր վարած Merձedes մակնիշի ավտոմեքենայով Ճամբարակ-Դրախտիկ ավտոճանապարհի 2-րդ կմ հատվածում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց, բախվել ճանապարհին տեղադրված մետաղե արգելապատնեշներին եւ մի քանի պտույտ շրջվելով՝ հայտնվել ձախակողմյան ձորակում: Վթարի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ: Պարզվել է, որ մահացածը ծառայում էր ՀՀ ՊՆ N զորամասում՝ որպես պայմանագրային զինծառայող:

ՄԱՀԱՑԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Օգոստոսի 31-ին՝ ժամը 03.45-ին, Երեւանի Խանջյան փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի էր ենթարկել 39-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց:

Ոստիկանությունից հայտնում են, որ սեպտեմբերի 1-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ վրաերթի ենթարկված 39-ամյա Վիգեն Թ.-ն մահացել է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 45 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԿԱՍ

Մեկնարկեց նոր ուսումնական տարին: Տավուշի մարզի Բարեկամավանի, Աճարկուտի եւ այլ գյուղերի դպրոցներում երկկոմպլեկտ, եռակոմպլեկտ դասարաններ են գործում, իսկ Իջեւան, Նոյեմբերյան, Բերդ, Դիլիջան քաղաքների հիմնական դպրոցների դասասենյակներում աշակերտների մեծ քանակի պատճառով շնչելու օդ չկա: Տավուշի դպրոցներում տարբեր առարկաների ուսուցիչների, հատկապես՝ մասնագետ ուսուցիչների պակաս կա, որը մասամբ է հագեցվում: Համացանցում հայտարարություններ են տարածվել Իջեւանի խոշորացված համայնքի դպրոցներից մեկում աշխարհագրության, Նոյեմբերյան համայնքի կրթօջախներում՝ ինֆորմատիկայի, Բերդ համայնքի դպրոցներից մեկում դասվարի թափուր տեղերի մասին: Տավուշի մարզի սահմանամերձ շատ գյուղերի՝ Արծվաբերդի, Բարեկամավանի, Ոսկեվանի, Սարիգյուղի եւ այլ դպրոցների շենքերը նորոգման կարիք ունեն, սակայն այդ նպատակով պետական բյուջեից գումարներ չեն հատկացվում:

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

Սեպտեմբերի 2-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւանի նստավայրում նշանակված էր Բերդ համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանի դատավարության հերթական նիստը: Նիստը չի կայացել: Հ. Մանուչարյանի պաշտպան Արման Թամրազյանը հայտնեց, որ Հ. Մանուչարյանը մեղադրվում է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հոդվածով, նրա վերաբերյալ դատաքննությունը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում դեռ չէր սկսվել, ուստի նրա դատավարությունը այսուհետ կկայանա կոռուպցիոն հանցագործությունները քննող դատարանում: Ա. Թամրազյանը դա դրական համարեց, քանզի Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Մարդանյանը տարբեր պատճառաբանություններով բազմիցս մերժել է Հ. Մանուչարյանի խափանման միջոց կալանքը փոխելու վերաբերյալ Հ. Մանուչարյանի պաշպաններ Արման Թամրազյանի եւ Հայկ Ալումյանի ներկայացրած միջնորդությունները:

2012 թվականից Բերդի քաղաքապետ, 2017-ից՝ Բերդի խոշորացված համայնքի ղեկավար Հ. Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին («Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) եւ 314-րդ մասին 1-ին մասերի հատկանիշներով («Պաշտոնեական կեղծիքը): Նա իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում՝ դրանք համարելով սարքովի: Նա անազատության մեջ է 2021 թվականի նոյեմբերի 9-ից: Սեպտեմբերի 25-ին կայանալիք Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով ընտրություններում Հ. Մանուչարյանը գլխավորում է «Իմ հզոր համայնք» եւ Վահան Բաբայանի Ռեֆորմիստների կուսակցությունների կազմած «Ջորավոր համայնք» դաշինքի թեկնածուների 62-հոգանոց ցանկը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԻՐԱՎԻՃԱԿ Է

Ոչ միայն գլոբալ, նաեւ Կովկասում համաճարակը եւ կառավարությունների կիրառած սահմանափակումները բացասաբար են անդրադարձել տնտեսության վրա: Արդեն իսկ 2020 թվականին համաշխարհային տնտեսությունը կրճատվել է 3,4 տոկոսով: Հարավային Կովկասի տնտեսության անկումն ավելի մեծ է եղել եւ կազմել է -5,3 տոկոս, ինչը միայն համաճարակի հեռ չի կապված:

2021 թվականին վրացական տնտեսության վերականգնման տեմպերն ավելի բարձր են եղել Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսածից: Տնտեսության վերականգնման այս տեմպերը շարունակվել են նաեւ այս տարի: Մարտին տնտեսությունն աճել է 10,6 տոկոսով, իսկ ապրիլին՝ 2,6 տոկոսով: Նույն տարվա մայիսին աճի տեմպը կազմել է 25,8 տոկոս, որն ընթացիկ տարվա 5-րդ ամսում կազմում է 11,6 տոկոս: Հունիսին Վրաստանի տնտեսությունն աճել է 7,2 տոկոսով, որը հուլիսին կազմել է 9,7 տոկոս: Այս տարվա առաջին 7 ամիսներին աճի միջին տեմպը 10,2 տոկոս է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կազմել է 12,2 տոկոս:

Ադրբեջանի իրական տնտեսության ծավալը 1,1 տոկոսով գերազանցել է մինչ համաճարակը եղած մակարդակը: Ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին Ադրբեջանի իրական տնտեսության ծավալը 7,7 տոկոսով գերազանցել է նախահամաճարակային շրջանը, որը փետրվարին դեռ 3,3 տոկոս էր: Դա կապված է մարտին նավթի գների կտրուկ աճի հետ:

Մասնավորապես, Ուկրաինա Ռուսաստանի ներխուժման եւ սահմանված պատժամիջոցների պատճառով նավթի գներն աճել են, իսկ նավթագազային արդյունաբերությունը գերիշխող է Ադրբեջանի տնտեսությունում: Իրավիճակը չի փոխվել անգամ ապրիլին. հունվար-մայիսին տնտեսական աճը կազմել է 7,2 տոկոս, որը 2021 թվականի նույն ժամանակահատվածում կազմել է 0,8 տոկոս: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում Ադրբեջանի տնտեսության աճը կազմում է 6,2 տոկոս, ինչը 3,5 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա 7 ամիսների ցուցանիշը:

Համաճարակից հետո Հայաստանում անբարենպաստ իրավիճակ էր տնտեսության վերականգնման առումով: Բացի համաճարակի պատճառով տնտեսական սահմանափակ ակտիվությունից, Հայաստանի պարագայում լրացուցիչ բացասական հանգամանք էր 44-օրյա պատերազմը, հետեւաբար 2021 թվականին Հայաստանի տնտեսության չափը 2,0 տոկոսով ցածր կլինի մինչեւ համաճարակը եղած մակարդակից:

Այս տարվա մարտին Հայաստանի տնտեսության աճը կազմել է 6,7 տոկոս, իսկ առաջին եռամսյակի աճը կազմել է 9,6 տոկոս, ինչը, համաճարակին նախորդած ժամանակահատվածի համեմատ, աճել է 7,4 տոկոսով: Արդեն մայիսից տնտեսության աճի տեմպերն ավելի բարձր են եղել, քանի որ աճն այս ժամանակահատվածում կազմել է 13,0 տոկոս, որը հունիսին հասել է 18,3 տոկոսի: Հայաստանի տնտեսությունը հուլիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 19,4 տոկոսով: Այսպիսով, ընթացիկ տարվա 7 ամիսներին աճի տեմպը կազմում է 13.1 տոկոս, որը 2021 թվականի նույն ժամանակահատվածում կազմել է 5.0 տոկոս:

Ընդհանուր առմամբ, անցյալ տարի Վրաստանում եւ Ադրբեջանում տնտեսության վերականգնման տեմպերը դրական էին, ինչը զգալիորեն անբարենպաստ էր Հայաստանի պարագայում:

Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսմամբ՝ այս տարի Վրաստանի տնտեսությունը կաճի 5,5 տոկոսով, սակայն դա ակնհայտորեն հոռետեսական սցենարի նշան է, քանի որ աճի միտումը ներկա փուլում համեմատաբար բարձր է:

ԼՈՒՐԵՐ

95 ԸՆՏԱՆԻՔ ՏՈՒՆ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Արցախի Ասկերանի շրջանի Սղնախ, Մոշխմհատ, Մադաթաշեն եւ Ջրաղացներ գյուղերից տեղահանված 95 ընտանիք վիճակահանությամբ տուն է ստացել Աստղաշեն համայնքի վարչական տարածքի նորակառույց թաղամասում: Նորակառույց առանձնատների վիճակահանության արարողությանը Արցախի պետական նախարար Արտակ Բեգլարյանը խորհրդանշական է համարել հետպատերազմյան դժվարին իրավիճակում Արցախի Հանրապետության օրը բնակարանամուտով տոնելը:

«Պետական միջոցներով այստեղ շուրջ 136 տուն է կառուցվում: Առաջիկայում մի քանի տասնյակ ընտանիքներ նույնպես առանձնատներ կստանան այս բնակավայրում: Մենք կորցրածի դիմաց կառուցում ենք բազմապատիկը մեր կեցությամբ, գոյությամբ ու արարումով Արցախը հայկական պահելու համար»,- ասել է պետնախարարը: Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանն օրհնության խոսքում նաեւ կարեւորել է ժողովրդագրական աճը՝ որպես Արցախի հզորացման գրավական, որի համար պետության կողմից այսօր հնարավորություններ են ստեղծվում:

Արցախի բնակարանային հարցերի կոմիտեի նախագահ Արմեն Մանգասարյանի խոսքով՝ կառույցի մեկամյա գործունեության ընթացքում ավելի քան 1000 բնակարան է տրամադրվել շահառուներին:

Կոմիտեի նախագահը նշեց, որ վիճակահանությունը վաղ կազմակերպելու նպատակը նաեւ տանտերերին շինաշխատանքներում ընդգրկելն է եւ հնարավորություն ընձեռելը, որպեսզի նրանք արդեն իսկ կարողանան զբաղվել տնամերձ հողամասի մշակմամբ, գյուղատնտեսական աշխատանքներով: Կոմիտեի նախագահի տեղակալ Ինա Իշխանյանի տեղեկատվությամբ՝ Ասկերանի վերին ենթաշրջանի 4 համայնքից տեղահանված ընտանիքների համար նախատեսված նոր բնակավայրում շինաշխատանքները դեռ շարունակվում են: Բոլոր տները համապատասխան գույքով ու կահավորմամբ շահագործման կհանձնվեն առաջիկա հունվարին:

ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՉ ԽՆԴԻՐՆԵՐ

Աղիքային վարակիչ հիվանդությունները տարածվում են ջրի, սննդի միջոցով, ինչպես նաեւ կենցաղ-կոնտակտային ճանապարհով. իրազեկում է

ՀՀ Առողջապահության նախարարությունը:

Աղիքային վարակների հարուցիչները լավ պահպանվում են սննդամթերքի մեջ եւ բարենպաստ պայմաններում աճում եւ բազմանում են:

Շոգ եղանակին լավ չլվացված մրգերը եւ բանջարեղենը, համապատասխան պայմաններում չպահված սննդամթերքը, ոչ ճիշտ պատրաստված ուտեստներն ավելի հաճախ են դառնում աղիքային վարակիչ հիվանդությունների առաջացման պատճառ:

Աղիքային վարակիչ հիվանդություններով առավել հաճախ հիվանդանում են երեխաները, տարեցները, քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք, որոնց իմուն համակարգը թույլ է:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 31-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Ի գիտություն՝ հայտնում ենք, որ սույն թվականի սեպտեմբերի 1-ին «Ժողովուրդ» օրաթերթում եւ www.armlur.am կայքում հրապարակված «Առանց հաճախորդի թույլտվության գումար են գանձել. «Հայփոստ»-ից դժգոհում են» վերնագրով հոդվածը պարունակում է մի շարք անճշտություններ:

Մասնավորապես, հոդվածը պարունակում է հետեւյալ տեղեկությունը. ««Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ բողոքող քաղաքացիները նշել են, որ դեպքեր կան, երբ հաճախորդների՝ կցված բանկային քարտերից, առանց հաճախորդի թույլտվության, գանձել են գումար փաստացի չիրականացված ծառայությունների համար»: «Հայփոստ» ընկերության կողմից կազմակերպված ներքին ուսումնասիրությունների արդյունքում հաճախորդի բանկային քարտից առանց հաճախորդի թույլտվության չմատուցված ծառայության համար գումարների գանձման դեպքեր չեն արձանագրվել: Հետեւաբար, խնդրում ենք նման դեպքերի մասին անձնավորված տեղեկություններ ունենալու պարագայում դրանք տրամադրել «Հայփոստ» ընկերությանը՝ ՀՀ իրավապահ մարմիններին դիմելու համար, քանի որ նկարագրված գործողությունն իր մեջ կարող է պարունակել քրեորեն պատժելի արարք:

Հոդվածի մեկ այլ մասում ասվում է. «...ընկերությունը օնլայն շոփինգի ոլորտում է դեռեւս 2021 թվականի նոյեմբերից, բայց այդ օրից ի վեր գրեթե ոչ մի փաթեթ չի առաքել ակնկալվող ամսաթվով»: Այս ընդհանրացված տեղեկությունը նույնպես պարունակում է անճշտություններ, քանի որ.

1) ԱՄՆ-ից Հայաստան առաքման ծառայությունը մատուցվում է ոչ թե «Հայփոստ» ՓԲԸ-ի, այլ վերջինիս դուստր ընկերություն հանդիսացող «Հայփոստ Յու Էս Էյ քորպ.» կորպորացիայի կողմից,

2) թեեւ առանձին ժամանակահատվածներում /մասնավորապես 2022 թվականի հունիս-օգոստոս ամիսներին/ ԱՄՆ-ում եւ տրանզիտային երկրներում մի շարք համալիր խնդիրների պատճառով գրանցվել են դեպի Հայաստանի Հանրապետություն առաքումների ուշացումներ, սակայն այդ ուշացումները կրել են ժամանակավոր բնույթ եւ չեն առնչվում 2021 թվականի նոյեմբերից առ այսօր առաքվող բոլոր պատվերներին: Տեղեկացնենք նաեւ, որ վիճակագրական տվյալների համաձայն՝ 2021թ. նոյեմբերից առ այսօր ԱՄՆ-ից փոխադրվող բոլոր պատվերների առաքման միջինացված ժամկետը կազմում է մոտ 10-8 աշխատանքային օր:

Բացի այդ, ցանկանում ենք տեղեկացնել, որ ծառայությունից օգտվելու համար հաճախորդը «Հայփոստ Յու Էս Էյ քորպ.» կորպորացիայի հետ կնքում է հրապարակային պայմանագիրը, որը տեղադրված է https://www.berber.am/am/terms-conditions հղումով»:

«Հայփոստ» ՓԲԸ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐ

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐԸ ԿՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԵՆ

Մայրաքաղաքի ինֆրաստիպ միջավայրն ընդգծող երեւանյան հանգստի գոտիները փուլ առ փուլ վերագտնում են իրենց երբեմնի նշանակությունը: Երեւանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերով քաղաքի տարբեր վարչական շրջաններում շարունակվում է այգիների եւ պուրակների բարեկարգման գործընթացը:

Երեւանի քաղաքապետարանից հայտնում են, որ Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը պատասխանատուների ուղեկցությամբ այցելել է շինհրապարակներ, տեղում ծանոթացել աշխատանքների ընթացքին: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝ Հայրենական պատերազմում հաղթանակի 40-ամյակին նվիրված զբոսայգին ստեղծման օրից ի վեր երբեւէ չէր հիմնանորոգվել, ծրագիրն օրվա պահանջ էր: «Երեւանում ունենք բավականին այգիներ, որոնք այս պահի դրությամբ չեն գործում: Ընդհանուր մեր քաղաքականությունն այն է, որ վերականգնենք չգործող այգիները, հետո նոր մտածենք նորերը հիմնելու մասին: Ճարտարապետական հետաքրքիր լուծումներով առանձնացող ու շատրվանային ընդարձակ համալիրով այգում լիարժեք հանգստի հարմարավետ պայմաններ կստեղծվեն: Հաշվի առնելով ներդրումների ծավալը՝ ծրագրի ավարտ է նախանշվում 2023 թվականը»:

«Մեր գլխավոր խնդիրն է՝ վերականգնել Խորհրդային Միության տարիներին կառուցված այս հուշարձանի նախկին տեսքը՝ շատրվանային համալիրի նույն ծավալով: Շատրվանները քաղաքը հովացնելու գործառույթ ունեն, եւ փորձելու ենք ջրատեխնիկական մասն այնպես կազմակերպել, որ ունենանք նույն ծավալի ջրթողում, որքան եղել է Խորհրդային Միության տարիներին»,- նշում է Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի ժ/պ Խորեն Գրիգորյանը: Որպեսզի հանգստի գոտու բարեկարգումը կրի համալիր բնույթ եւ ընդգրկի նաեւ այգու հարակից, երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակի 40-ամյակին նվիրված հուշահամալիրը, քաղաքապետի հանձնարարությամբ կիրականցվեն նախագծման աշխատանքներ: «Մինչեւ 2023թ. ավարտը կամ 2024թ. գարուն այդ հատվածը եւս ամբողջությամբ կավարտենք: Քաղաքում կունենանք եւս մեկ հարմարավետ միջավայր, որտեղ քաղաքացիների համար լավ ժամանցի տեղ կլինի: Կցանկանամ, որ յուրաքանչյուրս հոգ տանենք քաղաքի մասին, չաղտոտենք, քանի որ բոլոր այն ֆինանսական միջոցները, որոնք ծախսվում են հանրային վայրերի բարեկարգման համար, մեր քաղաքացիների վճարած հարկերից է, եւ դրանք պետք է արդյունավետ կառավարենք, որպեսզի կարողանանք այն բազում խնդիրները, որոնք ծառացած են Երեւանի առաջ, լուծել»,- ընդգծում է քաղաքապետը: Տարեկան ծրագրով հանգստի կազմակերպման համար հարմարավետ պայմաններ կապահովվեն նաեւ Աբովյան պուրակում: Համալիր բարեկարգմամբ ամբողջությամբ կարդիականացվի արտաքին լուսավորության եւ ոռոգման ցանցը, կտեղադրվեն նստարաններ, աղբամաններ, կանաչապատման նոր լուծումներ կլինեն: Տասնամյակներ շարունակ սպասարկման ու խնամքի բացակայությունը հետք են թողել նաեւ մայրաքաղաքի սրտում գտնվող այգիներում ու պուրակներում: Համայնքը վերակառուցման աշխատանքներ կիրականացնի նաեւ Օղակաձեւ զբոսայգու 4-րդ հատվածում: Կոմիտասի անվան պուրակը եւս կունենա արդիականացված ոռոգման համակարգ եւ արտաքին լուսավորության ցանց: Այստեղ խնդիրը մի փոքր այլ է. այգու զգալի հատվածը տնօրինում է վարձակալը: «Տարածքը վարձակալությամբ է տրվել տասնյակ տարիներ առաջ, եւ վարձակալը որոշել է ինչ-որ աշխատանքներ կատարել: Ցանկանում եմ ասել, որ եթե որեւէ տարածքի վարձակալ, երբ որոշում է քաղաքի պուրակներում կամ այգիներում կանաչապատում իրականացնել, պետք է տարածքի կառուցապատման, կանաչապատման նախագիծը համաձայնեցնի մեզ հետ: Մեր կազմակերպությունը ստեղծվել է հենց նրա համար, որ ամբողջ քաղաքն ունենա մեկ ձեռագիր: Կազմակերպությունն իր կողմից պատրաստ է նույնիսկ գծել եւ վարձակալին հանձնել համապատասխան նախագիծ, որ գրագետ կանաչապատում արվի: Այստեղ կա նաեւ ոռոգման խնդիր, եւ մենք պատրաստ ենք օժանդակել ու ոռոգման ավտոմատացված համակարգ ներդնել»,- ընդգծում է «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

«Հանգստի գոտիների հիմնանորոգում, նոր հանգստի գոտիների կառուցում հոդվածով այս տարի ընդհանուր առմամբ նախատեսված է 1.2 մլրդ դրամ: Նաեւ բակային տարածքների հիմնանորոգման համար է մեծ գումար հատկացված՝ մոտ 2 մլրդ դրամ: Ընթացիկ տարում 3.2 մլրդ դրամ է նախատեսված կանաչապատ տարածքներն ավելացնելու եւ քաղաքն առավել հարմարավետ դարձելու համար»,- նշում է Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը: Քաղաքային իշխանության ուղենիշն է Երեւանը դարձնել հարմարավետ կենսամիջավայր: Բոլոր նախաձեռնությունների մեկնարկը տրված է, իսկ ծրագրերի հիմքում քաղաքի համաչափ զարգացման սկզբունքն է:

ԼՈՒՐԵՐ

404–Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

2018-2022 թվականներին Վրաստանի նախագահի հրամանագրով Վրաստանի քաղաքացիություն է ստացել 13 հազար 575 օտարերկրացի, նրանցից 5 հազար 111-ի դեպքում վերականգնվել է Վրաստանի քաղաքացիությունը, իսկ 8 հազար 382-ին Վրաստանի քաղաքացիություն է շնորհվել բացառիկ կարգով: Այս մասին տեղեկությունը տրամադրում է նախագահի աշխատակազմը: 2018-2022 թվականներին Վրաստանի քաղաքացիություն ստացած 8 հազար 464 անձանցից 72 տոկոսը (6 հազար 75 հոգի) եղել են Ռուսաստանի քաղաքացիներ: Ըստ վիճակագրական տվյալների՝ նույն ժամանակահատվածում Ռուսաստանից հետո ամենաշատը՝ 428 մարդ, եղել են Ուկրաինայի, 404-ը՝ Հայաստանի, իսկ 330-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներ: Նշվում է նաեւ, որ 2022 թվականի հուլիսի 7-ի դրությամբ Վրաստանի քաղաքացիություն է ստացել Ռուսաստանի 723 քաղաքացի, այդ թվում՝ 551 քաղաքացի՝ Ուկրաինայում սկսված պատերազմից հետո: Նույն ժամանակահատվածում Վրաստանի քաղաքացիություն է շնորհվել Ուկրաինայի 8 քաղաքացու:

ԾՐԱԳԻՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

2020 թվականի արցախյան պատերազմի մասնակիցներին մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցում տրամադրելու պետական աջակցության ծրագիրը շարունակվում է:

ԿԳՄՄՆ-ից հայտնում են, որ կառավարության՝ սեպտեմբերի 1-ին կայացած նիստում ընդունված որոշմամբ՝ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության՝2022 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների վերաբաշխման միջոցով գումար է հատկացվել շահառուների հերթական խմբի ուսման վարձի հատուցման նպատակով: Հատկացված 52 մլն 380 հազար դրամ գումարի շրջանակում ուսման վարձի փոխհատուցում կստանան ընթացիկ տարվա մարտի 22-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից ԿԳՄՄ նախարարություն ներկայացված շուրջ 221 շահառուներ, որոնք զորացրվել են 2021-2022 թվականների ձմեռային զորացրման ժամանակ: Ընդհանուր առմամբ նշված պետական ծրագրով 2021 թ.-ին ուսման վարձի փոխհատուցում է ստացել բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 7318 ուսանող, որոնց տրվել է շուրջ 1 մլրդ 595 մլն 931 հազար դրամի փոխհատուցում, իսկ 2022 թ.՝ 1026 ուսանող, որոնց տրվել է շուրջ 233 մլն 262 հազար դրամի չափով ուսման վարձի փոխհատուցում: Ուսման վարձի փոխհատուցման գործընթացը եւ բուհերի ներկայացրած հայտերի հիման վրա շահառուների տվյալների հավաքագրումը ԿԳՄՄ նախարարության կողմից կշարունակվի մինչեւ պատերազմի մասնակից ժամկետային բոլոր զինծառայողների զորացրումը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԹԱՏՐՈՆ

ԿԲԱՑՎԻ ԳԱԼՅԱ ՆՈՎԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑ

Երեւանում սեպտեմբերի 5-ին պաշտոնապես իր դռները կբացի «Գալյա Նովենց» թատերական դպրոցը: Հրավիրված ասուլիսում դպրոցի հիմնադիր, դերասանուհի Մարիամ Ղազանչյանը տեղեկացրեց, որ նախապատրաստական աշխատանքները տարվում են արդեն մեկ տարի: Վերջին երեք ամսվա ընթացքում ընդունելության փուլն է եղել երկու տարիքային խմբի համար՝ 7-13 տարեկաններ եւ 14-ից բարձր:

«Մեր նպատակն է կրթել նոր սերնդին, երիտասարդներին, նրանց ավելի մոտեցնել մշակույթին, թատրոնին: Ունենք նաեւ դիմորդ-երիտասարդներ, որոնք ցանկանում են, մեր դպրոցում սովորելով, պատրաստվել թատերական ինստիտուտ ընդունվելուն: Ասեմ, որ բավական լավ մասնագետներ են հավաքված աշխատանքային խմբում»,-ասաց Մարիամ Ղազանչյանը:

Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, որը նաեւ դասավանդելու է դպրոցում, նշեց, որ դպրոցի անունն արդեն պարտավորեցնող է, եւ հնարավորինս ամեն ինչ պետք է անել հաջողելու համար, մանավանդ որ պրոֆեսիոնալներ են հավաքվել:

«Նման դպրոցի անհրաժեշտությունը կա: Այսօր թատերական ուսուցումը պատշաճ մակարդակով չի տարվում: Երեխաները կտրված են մշակույթից, ես չգիտեմ, թե այս «սմարթֆոնացավն» ուր է տանում մատաղ սերնդին: Շատ անհանգիստ եմ այդ կապակցությամբ: Կարծում եմ, որ որքան շատ լինեն նման դպրոցները, այնքան ավելի լավ: Թատրոնն արվեստի այն տեսակն է, որն իր մեջ ներառում է արվեստի բոլոր ճյուղերը՝ գրականություն, նկարչություն, երաժշտություն եւ այլն»,- ասաց Հակոբ Ղազանչյանը:

Ռեժիսոր Արթուր Սարիբեկյանի խոսքով՝ դիմորդներին դպրոց ընդունելիս խիստ չափորոշիչներով չեն առաջնորդվել:

«Եթե մարդիկ ցանկանում են շփվել արվեստի, թատրոնի հետ, ապա դա պետք է ապահովենք: Մեզ համար կարեւոր է, որ դպրոցի դռները բաց լինեն բոլոր դիմորդների համար: Մենք պետք է ամեն ինչ անենք մեր իմացածը նոր սերնդին փոխանցելու, նրանց կրթելու, մշակույթին մերձեցնելու համար»,- ասաց Արթուր Սարիբեկյանը:

Դասընթացը տեւելու է մեկ տարի: Ավարտին աշակերտները հանդես են գալու ներկայացմամբ:

Պարուսույց Արտյոմ Գեւորգյանը տեղեկացրեց, որ զբաղվելու են նաեւ պարարվեստով. առջեւում հետաքրքիր բեմադրություններ են: Բանախոսներն ընդգծում են՝ դպրոցի աշխատանքների հիմքում նաեւ թատերական ոլորտի տաղանդների բացահայտումն է, սակայն նույնիսկ եթե շատերը չգնան այդ ճանապարհով, միեւնույնն է, կլինեն ավելի կրթված, արվեստին ավելի մոտ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՕՊԵՐԱ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԼՍՈՒՄՆԵՐ

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի եւ «Օտտավիո Զիոնո» (Ottavio Ziino) միջազգային օպերային մրցույթի նախաձեռնողների համագործակցության արդյունքում 21-րդ մրցույթի լսումներն անցկացվում են օպերային թատրոնում:

Լսումները մեկնարկել են օգոստոսի 2-ին:

Նախագծի ղեկավար Լիլիթ Գաբրիելյանի խոսքով՝ «Օտտավիո Զիոնո» 21-րդ միջազգային լիրիկական մրցույթի լսումները Հայաստանում անցկացնելն ունի գերագույն նպատակ՝ աշխարհին տեսանելի դարձնել հայ տաղանդավոր օպերային արտիստներին, ինչպես նաեւ մաս կազմել նման բարձր նշանաձող սահմանած միջազգային մրցույթի:

«Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը նպատակասլաց գնում է այդ ճանապարհով»,-շեշտում է նա:

2002 թվականից «Il Villaggio della Musiča» մշակութային ասոցիացիան Իտալիայում՝ Հռոմում՝ մելոդրամայի հայրենիքում եւ բնօրրանում, հիմնադրել է «Օտտավիո Զիոնո» միջազգային օպերային մրցույթը, որը կրում է հայտնի դիրիժորի, ծագումով սիցիլիացի կոմպոզիտորի անունը: Մինչ օրս մրցույթին մասնակցել է շուրջ 6000 օպերային երգիչ ամբողջ աշխարհից: C.L.I.O.Z. -ի հաղթողների թվում են Ջեսիկա Պրատը, Մարինա Ռեբեկան, Լուչիանո Գանցին, Անժելա Նիսին, Կլաուդիո Սգուրան, Տոշակի Մուրակամին, Սիմոնե Պիացոլան եւ այլք:

Միջազգային օպերային մրցույթն այս տարի կանցկացվի սեպտեմբերի 20-22-ը Հռոմում՝ Ghione Theatre-ի հոյակապ միջավայրում: Ամեն տարի ժյուրիի կազմում ընդգրկվում են հեղինակավոր օպերային թատրոնների տեսուչներ եւ գեղարվեստական ղեկավարներ, օպերային երգիչներ եւ կոմպոզիտորներ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՎԱՐՏԵՑԻՆ ՈՉ–ՈՔԻ

Դուբայի շախմատի միջազգային մրցաշարում կայացել են 6-րդ տուրի պարտիաները: Dubai open-ի այս տուրում Հայաստանի երկու ներկայացուցիչներն էլ՝ Արամ Հակոբյանը եւ Սամվել Տեր-Սահակյանը, իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին անդամ, այժմ ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Վլադիմիր Հակոբյանը կիսեց միավորը:

ՁԻՋԵԼ ԵՆ ԿՈՍՈՎՈՅԻ ԹԻՄԻՆ

Կոսովոյի մայրաքաղաք Պրիշտինայում կայացել է Կանանց 2023 թվականի աշխարհի առաջնության որակավորման փուլի՝ Կոսովո-Հայաստան հանդիպումը: Այս մասին հայտնում է ՀՖՖ-ն: Կանանց Հայաստանի ազգային հավաքականը պարտվել է մրցակցին 1:2 հաշվով: Հայաստանի հավաքականը հանդես է եկել հետեւյալ մեկնարկային կազմով.

12. Արմինե Հարությունյան, 3. Սավանա Թեյլոր, 5. Լիանա Ղազարյան, 6. Անա Դալլաքյան, 7. Նենսի Ավեսյան, 8. Մարալ Արթին (ա), 10. Օլգա Օսիպյան (4. Մարիա Սախինովա, 66), 14. Կլաուդիա Չոլակյան, 17. Վերոնիկա Ասատրյան (13. Կարինե Եղյան, 90+2), 18. Մարինե Կարապետյան, 22. Անի Ղուկասյան:

ՌԵԿՈՐԴ

Անգլիայի Պրեմիեր լիգայի ակումբները ամառային տրանսֆերային պատուհանի ընթացքում ծախսել են 2,2 միլիարդ եվրո, ինչը ռեկորդային ցուցանիշ է: Նախորդ ռեկորդը գրանցվել էր 2017-ին՝ 1,6 միլիարդ եվրո: Պրեմիեր լիգայի 20 ակումբներից 9-ի ծախսը տրանսֆերային շուկայում գերազանցել է 100 միլիոն եվրոն: «Չելսին» ծախսել է 312,5 միլիոն եվրո, «Մանչեսթեր Յունայթեդը»՝ 250 միլիոն եվրո, «Վեստ Հեմը»՝ 189 միլիոն եվրո, «Տոտենհեմը»՝ 176 միլիոն եվրո, «Նոթինգեմ Ֆորեսթը»՝ 168 միլիոն եվրո, «Մանչեսթեր Սիթին»՝ 145 միլիոն եվրո: Անցած ամառային տրանսֆերային պատուհանի համեմատ Պրեմիեր լիգայի ակումբները հունիսի 10-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ծախսել են 1,28 միլարդ եվրո շատ:

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ

Իսպանիայի փոխչեմպիոն «Բարսելոնայի» ամերիկացի պաշտպան Սերջինո Դեստը մեկ տարվա վարձակալության պայմանագրով տեղափոխվեց Իտալիայի չեմպիոն «Միլան». հաղորդում է միլանյան ակումբի մամուլի ծառայությունը: Հաջորդ ամռանը «Միլանը» հնարավորություն կունենա 20 միլիոն եվրոյով գնել 21-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերային իրավունքը: Դեստը 2020 թվականին Ամստերդամի «Այաքսից» էր տեղափոխվել «Բարսելոնա»: 2019 թվականից նա ԱՄՆ-ի հավաքականի խաղացող է: Իսպանիայի անցած առաջնությունում Դեստը մասնակցել է 21 հանդիպման, կատարել 3 գոլային փոխանցում:

● *Սեպտեմբերի 6-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Համլետ» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Մասսային միության ռեգինդես համարվող անձը Մասսային միության տարածքում հաշվառված անձնական օգտագործման ավտոմեքենայով ժամանել է ՀՀ: Պե՞տք է ճանապարհային կամ բնապահպանական վճարներ վճարի:

Համլետ Գեւորգյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ եւ «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածների համաձայն՝ այլ պետություններում հաշվառված Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց, ըստ դրանց տեսակի եւ բեռնատարողության, այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար գանձվում են բնապահպանական եւ ճանապարհային վճարներ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ մաքսային օրենսգրքի 192 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց մաքսային մարմնի թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100,000 դրամի չափով:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հյութերի դրոմավորման համար ձեռք բերված դրոմամպիտակները կորցնելու դեպքում ի՞նչ պատասխանատվություն կարող է առաջանալ:

Բելլա Սիմոնյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9.6-ի 5-րդ կետի համաձայն՝ չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը նշված հոդվածով սահմանված ժամկետներից ուշացնելու, նշված հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերում հարկային տեսչությունների կամ մաքսատների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրվելու օրվա դրությամբ հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը եւ տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9.6-ի՝ փակցնելու ընթացքում վնասված դրոշմապիտակները սույն հոդվածով սահմանված կարգով եւ դեպքերում վերադարձվում են հարկային մարմին յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով՝ մինչեւ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Երեւանի քաղաքապետարանը տեղեկացնում է, որ մայրաքաղաքում տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով սեպտեմբերի 4-ից երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Սեբաստիայի-Կուրղինյան փողոցների խաչմերուկում: Միաժամանակ նշված ճանապարհահատվածում կտեղադրվեն համապատասխան ճանապարհային նշաններ, ինչպես նաեւ ճանապարհը կգծանշվի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: